

**«Որպեսզի հասկանանք՝ ու՞ր ենք գնում, հարկավոր է անցյալում գտնել ներկային համապատասխանող իրավիճակ և տեսնել, թե ի՞նչ է մեզ սպասում ապագայում»<sup>1</sup>:**

**Վաղիմ Կոժինով**

## **ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱՆ**

Ուկրաինայի դեպքերով սկսված՝ **խորհրդային ժառանգության** համար ներկա անգիշում պայքարն արտաքուստ նմանվում է Հայոց պատմության ընթացքում պարբերաբար արձանագրված՝ կայսրությունների անկման, Հայաստանի վերանկախացման և ապա՝ պետականության կորստյան այն հաջորդական **շրջափուլերին** կամ **ցիկլերին**, որոնց դիմակայելու անկարողությունը մեզանում ի հայտ է եկել Սելևկյանների, Հռոմի, Բյուզանդիայի և վերջապես՝ Օսմանյան ու Ռուսաստանյան կայսրությունների անկման դարաշրջաններում:

Պատմաքաղաքական հետահայացի լայն ուսպնյակի մեջ դիտարկելու պարագայում, դժվար չէ արձանագրել, որ, իսկապես, նման շրջափուլերի սկզբնական հանգրվաններում ստեղծել, իսկ ավարտական փուլերում կորցրել ենք մեր հաջորդական պետությունները՝ Արտաշիսյան, Արշակունյաց, Բագրատունյաց հարստությունները և վերջապես՝ Հայաստանի առաջին Հանրապետությունը, որի անկման ռազմաքաղաքական նախադրյալների հասունացման գործում, ի դեպ, վճռորոշ է եղել հենց նույն՝ ուկրաինա-ռուսական անտագոնիզմի խաղարկումը:

Ասվածի համատեքստում ներկայումս **պարտավոր ենք հիշել**, որ Ռուսաստանում Քաղաքացիական պատերազմի (1917-1922/23 թթ.) վճռորոշ հանգրվանում՝ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, բոլշևիկների հանդեպ տպավորիչ հաղթանակներ արձանագրած և Մոսկվայի մատույցներում հայտնված Ռուսաստանի Հարավի (**Ա. Դենիկինի**) զինված ուժերը ի վերջո պարտվեցին ու կազմալուծվեցին ո՛չ առանց արտաքին «հուշարարության», նրանց թիկունքը ներխուժած Ուկրաինայի անարխիստների ակտիվ միջամտության շնորհիվ<sup>2</sup>: Արդյունքում՝ 1919 թ. նոյեմ-

<sup>1</sup> Ընդունվել է տպագրության 20.03.2014:

<sup>2</sup> 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Ռուսաստանի Հարավի գործերից պարտված և Մոսկվայից էվակուացվելու մասին մտածող բոլշևիկյան իշխանություններին «հանկարծ» օգնության հասած ուկրաինական անարխիստների ռազմական առաջնորդ **Նեստոր Մախնոյի** բազմահազարանոց հեծելազորը, ներխուժելով Ա. Դենիկինի գործերի թիկունքը, սկսեց սպառնալ նրա զորակայանին՝ ստիպելով դադարեցնել հաջող հարձակումը, ժամանակ կորց-

2014 թ. հունիս-մարտ, 1 (45) հունիս-մարտ, թիվ 1 (45) փաթեթ, թիվ 2 (ժԲ) փաթեթի համար

բերից մինչև 1920 թ. փետրվարն ընկած ժամանակամիջոցում խորտակվեց Ա. Դենիկինի բանակի ռազմական ներուժը, և անկախ Հայաստանը կորցրեց իր **ռազմավարական դաշնակցին**<sup>3</sup>՝ քիչ անց հայտնվելով բոլշևիկյան «մուրձի» ու քեմալական «սալի» արանքում: Ուստի երբ այսօր ոտքի կանգնելու փորձեր անող Ռուսաստանի դեմ նորից գործի է դրվում ուկրաինական անարխիայի «դանդաղ գործողության ռունբը», մենք չենք կարող չանհանգստանալ նույն գործընթացի կրկնության հավանականությունից:

Պատճառն ակնհայտ է. ներկայումս նույնպես Արևմուտքի անգլո-սաքսոնական «միջուկի» համար «ուկրաինական խնդիր», որպես այդպիսին, գոյություն չունի. խնդիրն Ուկրաինայի միջոցով Ռուսաստանի ներքաշումն է երկարատև և ուժասպառ անող դիմակայության մեջ: Այդ պատճառով, ինչպես ժամանակին, այնպես էլ այսօր, ուկրաինա-անարխիստական քառսի վերարթնացումով փորձ է արվում իրականություն դարձնել **ազատ ռուսների** միջոցով **անազատներին** կամ վերջիններիս բնորոշմամբ՝ «մոսկալներին» ազատագրելու, այսինքն՝ **«երկվորյակների դիմակայություն»** խաղարկելու տարբերակը: Սա է Արևմուտքի իրական ռազմավարական նպատակը, ինչն արդեն **«Ուկրաինայի պատմական առաքելություն»** է հռչակել այդ երկրի նախկին վարչապետ Յուլյա Տիմոշենկոն՝ ամենևին էլ չվախենալով իր հայրենիքի զոհաբերման հեռանկարից:

Այս պատմաբաղաբական արքետիպերի վերախաղարկման արդիական տեխնոլոգիաների հիմքը կազմող խորքային գործընթացների կրկնության հավանականությունը հաշվարկելու համար սկզբում հարկավոր է ձշտել **ժամանակի** ընկալման մեր դիտանկյունը: Այսինքն՝ ժամանակային ինչպիսի չափույթով ենք մենք գնահատում ներկայումս Հայաստանի շուրջը տեղի ունեցող փոփոխությունները՝ ավանդական հասարակություններին բնորոշ պատմության **շրջափուլային** կամ **ցիկլային** ընթացքի մասին պատկերացումներով, թե՛ Հիսուսի փրկչական առաքելության եզակիության ու անկրկնելիության աշխարհայացքային մեկնակետի հետագա գիտական ընկալումը բյուրեղացրած **գծային պատմության** միջոցով<sup>4</sup>:

նել, իսկ հետագայում էլ վերջնական պարտություն կրել կազակներից կազմված Կուբանյան բանակի փլուզման պատճառով:

3 Այդ օրերին Հայաստանից խուճապահար հեռացող դենիկինյան սպաներից մեկի՝ գեներալ Ղամազովի սպանության մասին տե՛ս «ՎԷՄ»-ի ներկա համարում հրապարակվող փաստաթղթերը՝ «ՀՅ Դաշնակցության 1918–1920 թթ. պատմության վավերագրերը: Մաս վեցերորդ: Գեներալ Ղամազովի սպանության և այլ հարցերի քննությունը ՀՅԴ Գերագույն դատական ատյանում»:

4 Հայտնի է, որ դեռևս հին հույները, հիմնվելով Հին Արևելքում ձևավորված ավանդական պատկերացումների վրա, առաջնորդվում էին պատմության շրջափուլային կամ ցիկլային ընթացքի մասին համոզմունքներով: Կենդանի բնության եղանակային ցիկլերը պատճենող՝ մեռնող ու հարություն առնող Աստվածների մասին հավատալիքների տեսքով դրանք տեղ են գտել նաև Հայոց առասպելաբանության մեջ (Արա Գեղեցիկ և Շամիրամ): Քրիստոնյա դառնալուց հետո էլ բազում դարեր մենք շարունակել ենք առաջնորդվել նման սահմանափակ պատկերացումներով, որոնց հաղթահարման սաղմը դրված էր Հիսուսի ինքնազոհաբերության փաստի **եզակիության ու անկրկնելիության** գաղափար-սկզբունքի մեջ: Դեռևս միջնադարի արշալույսին Օգոստոս Երանելու նման Սուրբ հայրերը գիտակցել էին այս իրողությունը, իսկ նման ելակերտից բխող **գծային պատմության** մասին գիտական պատկերացումները ձևավորվեցին միայն նրա կրկնողության ու անկրկնելիության մասին

Առ այդ՝ պարտավոր ենք արձանագրել, որ պատմության շրջափուլա-  
յին ընթացքի միֆակնանացումը՝ «հավերժ վերադարձի առասպելը»<sup>5</sup>, բնո-  
րոշ է անցյալի հիշողությունների մեջ ապրող հանրույթներին, իսկ ահա  
պատմության ռացիոնալ կամ գծային ընկալումը հիմնվելով ճիշտ հակա-  
ռակ ելակետի՝ լատինական **hic et nunc (այստեղ և հիմա)** սկզբունքի  
վրա, թույլ է տալիս եզրակացնել, որ **մեր շուրջը տեղի է ունենում ԽՄԲՄ  
փլուզումով սկսված՝ համաշխարհային պատմության գծային ընթաց-  
քի շրջափուլային տարածում-դիֆուզիան՝ նախկին կայսրության սահ-  
մանային երկրամասերում կամ «ուկրաինասերում»<sup>6</sup>: Այսինքն՝ ոչ թե  
պատմական ամբողջն է «պտտվում» որոշակի առանցքի շուրջ, այլ  
վերջինիս մասերն են համաշխարհային պատմության գծային ընթացքը  
կերպավորում նրա ավագանը նետվելու հերթականության կոնկրետ  
շրջափուլերի տեսքով:**

Մինչդեռ՝ պատմական ժամանակի ռացիոնալ կամ գծային ընկալումը  
բացառում է պատմության նախորդ շրջափուլերի մեխանիկական կրկնու-  
թյան հնարավորությունը՝ առաջին պլան մղելով անցյալի ու ներկայի  
նմանությունների ու տարբերությունների **նոր հաշվեկշռի** հստակեցման  
խնդիրը, ինչը հիմնվում է անցյալի յուրաքանչյուր իրադարձության, այ-  
սինքն՝ պատմական ակտի **ինվարիանտության** սկզբունքի վրա:

Ավելին՝ պատմական ամբողջը ներկայումս շարունակում է առաջադի-  
մության իր անկասելի ընթացքը՝ չնայելով այն հանգամանքին, որ որքան  
Արևմուտքը որպես քաղաքակրթական բևեռ տեղաշարժվում է դեպի  
Արևելք, այնքան ուժեղանում է նրան ցուցաբերվող հակազդեցությունը:  
Նման պայմաններում սահմանային իրավիճակում գտնվող երկրները,  
որոնք հայտնվել են պատմության **խաչմերուկների** կամ **հանգույցների**  
վրա, թևակոխում են իրենց գործառնական նշանակության փոփոխության  
հանգրվանը: Նախկին ԽՄԲՄ-ի արևմտյան և հարավային մասերը հենց

բավարար փաստական նյութեր կուտակած Նոր ժամանակներում:

5 Стн Мирча Элиаде. Миф о вечном возвращении. Гл. 4– Ужас перед историей. <http://nz-biblio.narod.ru/html/eliade1/retoir4.htm>

6 «**ուկրաինա**» նախապես՝ **о/украина** (սահմանային երկրամաս) հասկացությունը սկզբում  
որևէ էթնիկ իմաստ չի պարունակել: Նրա ձևավորման հիմքը դարձած երկիրն ի սկզբանե  
կոչվել է **Ռուսիա** կամ **Կիևյան Ռուսիա**, իսկ «Ուկրաինա» բնորոշումը 12-րդ դարից սկսած  
օգտագործվել է սոսկ տարածքային, բայց ոչ էթնիկ իմաստով: Նույնն է եղել նաև Լիտվական  
Մեծ իշխանության ու Լեհաստանի տիրապետության շրջանում, իսկ Ռուսաստանի կազմի  
մեջ մտնելուց հետո Դնեպրի ձախափնյակը կոչվել է իր պատմական անվան «փոքրացված»  
տարբերակով՝ Մալոռոսիա (Փոքր Ռուսաստան), որպեսզի տարբերվի Մեծ Ռուսաստանից,  
այսինքն՝ Մոսկովիայից: Իսկ Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրությունից խլված Սև  
ծովի հյուսիսային և մասամբ արևելյան ափամերձը կրել է Նովորոսիա (Նոր Ռուսաստան)  
անվանումը: Դրանց, ինչպես նաև Ռուսաստանի ներկայիս Ռուստովի մարզի և Կրասնոդարի  
ու Ստավրոպոլի երկրամասերի բնակիչները գրեթե նույն ծագումն ունեն և հիմնականում  
կազմված են Մոսկովյան ձորտատիրությունից փախած և կազակներ դարձած **ազատ** կամ  
«**թափառող**» ռուսների ժառանգներից: Վերջիններիս և **անազատների** կամ «**ծառայող մարդ-  
կանց**» դիմակայությունը դարերի պատմություն ունի, բայց նրանց մասնակի տարանջատումն  
էթնիկ դիմագիծ է ձեռք բերել Դնեպրի աջափնյակը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց քիչ  
անց՝ 19-րդ դարում տարածքային հիմքով վերջնականապես ձևավորված ուկրաինական  
ինքնության հիման վրա: Այդ պատճառով 18-րդ դարում ցարական իշխանությունների կողմից  
Հյուսիսային Կովկաս և այլ երկրամասեր աքսորված զապորոժյան ուկրաինացիներն այսօր  
ռուսներ են, իսկ ներկա Ուկրաինայում բնակվող միլիոնավոր ռուսների անձնագրերում գրված  
է «ուկրաինացի»:

նման հետխորհրդային «բեկորների» խառնարան են, որոնց ինտեգրումն Արևմուտքի կողմից հանդիպելով լուրջ հակազդեցության՝ վերածվել է երկկողմանի կլանումների միջոցով պատմական ամբողջի նոր դերակատարների հատակեցման գործընթացի: Այսպիսով՝ պատմության գծային ընթացքի ազդեցությունը սահմանային հանգույցների կամ խաչմերուկների վրա անխուսափելի է դարձնում վերջիններիս փուլ առ փուլ վերադասավորումը քաղաքակրթական **ներկա** և **ապագա** բևեռների շուրջ:

Հարց է առաջանում, իսկ որո՞նք են այսօր այդ բևեռները, երբ, ի տարբերություն Արևմուտքի, ներքին երկվությանը տառապող Ռուսաստանը, նույնպես լինելով սահմանային քաղաքակրթություն (Ասիա՝ Եվրոպայի համար և Եվրոպա՝ Ասիայի համար), իր վրա է վերցրել նույնպիսի երկվությանը տառապող Ուկրաինայից լեզվամշակութային առումով իրեն ավելի հոգեհարազատ մասերը տարանջատելու գործը, որի արդյունքում իրականում արձանագրվում է ոչ թե քաղաքակրթական նոր բևեռի ծնունդը, այլ **ուժի** տարածաշրջանային կենտրոն դառնալու հավակնություն ունեցող միջուկային գերտերության սահմանային հնարավորությունների հատակեցումը: Ուրեմն՝ ողջ խնդիրն այն է, թե առաջիկայում ի վիճակի՞ է լինելու արդյոք Արևմուտքի ֆինանսատնտեսական ու մշակութային դաշտում զգալիորեն ինտեգրված Ռուսաստանը նրան **հակադրվելու** իր անվիճելի կամքին գումարել իր շուրջը համախմբվող տարածքն ընդհանուր արժեհամակարգի մեջ **համադրելու** դրական ունակությունը:

Որովհետև ի տարբերություն վերջին տասնամյակներում տնտեսական թռիչք արձանագրած Չինաստանի, առավելագույնը, որին կարող են այսօր հասնել **Ռուսաստանը՝** հետխորհրդային տարածքում, **Բրազիլիան՝** Լատինական Ամերիկայում կամ **Իրանը՝** իսլամական աշխարհի մի հատվածում, ռազմական կամ տնտեսաքաղաքական ուժի տարածաշրջանային կենտրոնների ձևավորումն է: Արևմուտքի բուն միջուկի՝ ԱՄՆ-ի համեմատական թուլացման պարագայում սա միանգամայն հնարավոր տարբերակ է, ինչը սակայն չի կանխորոշում սահմանային տարածքներում գտնվող երկրների ու ժողովուրդների ձակատագրերը՝ քաղաքակրթական ընտրության ծիրում: Նման սցենարների գործադրման պարագայում նրանք հայտնվել ու հայտնվելու են Մայր կենգուրուի «պարկի» մեջ սպասելու կամ Վրաստանի և Ուկրաինայի պես «անհամբեր ձագուկների» նման դուրս թռչելու և վնասվելու երկրնտրանքի առջև:

Ուրեմն համաշխարհային պատմության գծային ընթացքի անկասելիության փաստի փոխակերպումը հետխորհրդային տարածքի վրա ազդող ու հակազդող ուժերի բախման որոշակի շրջապտույտի (ցիկլի), հետաձգելով Հայաստանի քաղաքակրթական ընտրության պահը, ներկայումս առաջին պլան է մղել պարզ գոյատևման հրամայականը՝ գրեթե զրոյականացնելով Ուկրաինայից հետո հաջորդ թիրախներից մեկը չլինելու կամ, ինչպես Երևանում են սիրում բնորոշել՝ «պլստալու» հնարավորությունը:

Եվ որպեսզի Վրաստանի կամ՝ Ուկրաինայի նման պատմության գոհասեղանի վրա հաջորդը մենք չլինենք, այսօրվանից պետք է առաջնորդվենք աշխարհայացքային այն մեկնակետով, որ հաջորդը հենց **մենք ենք**

**հայտնվելու** հետխորհրդային տարածքում գծային պատմության շրջափուլային ընթացքի ճանապարհին: Նման ալիքը հնարավոր չէ շրջանցել, ավելին՝ նրա հորձանուտում չխորտակվելու համար այլևս բավարար չէ նաև ուժի բեռների միջև խուսանավելու քաղաքականությունը: Պարզապես՝ Հայաստանի ներկա ընտրությունը դիտարկելով որպես միջավայրով պարտադրված **ընթացիկ նպատակահարմարություն**, հարկավոր է միմյանցից տարանջատել ուժի տարածաշրջանային կենտրոնների ձևավորման գործընթացը՝ մեր քաղաքակրթական ընտրության առաջադրանքից:

Վերջին ասպարեզում պահպանվող անորոշության պայմաններում համաշխարհային պատմության գծային ընթացքի շրջափուլային դրսևորումը ներկա Արևմուտք-Ռուսաստան և Ուկրաինա-Ռուսաստան դիմակայության փոխարեն՝ Հարավային Կովկասում խոստանում է կերպավորվել իր ավելի բարդ, եռանդամ բնորդի տեսքով՝ Արևմուտք-Ռուսաստան, Ռուսաստան-Թուրքիա-Իրան և Հայաստան-Ադրբեջան-Վրաստան:

Իսկ մինչ այդ հայտնվելով բազմաբևեռ աշխարհակարգի ուժի կենտրոններից մեկը դառնալու **ռեալ հնարավորության** և Եվրասիականության տեսությունը պրակտիկայի վերածելու **անորոշ երազանքի** միջև, իրական ընտրության առջև է կանգնում հենց ինքը՝ Ռուսաստանը: Հուսադրող է այն իրողությունը, որ նրա համար Եվրասիականությունը՝ որպես սլավոնաթյուրքական «ընդհանրությունների» հիման վրա արևմտյան գլոբալ քաղաքակրթությանն արժեքային առումով հակադրվելու հնարավորություն, սկսում է բացահայտել իր անհեռանկարայնությունը: Ողջ Ուկրաինայում և ապա Դրիմում ու Արևելյան Ուկրաինայում տեղի ունեցած վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ ապագա «Եվրասիացիներն» ավելի են ատում ռուսներին, քան Ուկրաինայի միջոցով նրանց «ազատագրելու» ծրագրեր մշակող արևմտյան ռազմավարները: Դրիմի թաթարների և Ադրբեջանի՝ բացահայտ և իր ռուսախոս բնակչությունից անհանգստացող Ղազախստանի՝ քողարկված համակրանքն Ուկրաինայում իշխանության եկած ուժերի հանդեպ, Եվրասիականության տեսության ու պրակտիկայի անհամապատասխանության առաջին առարկայական ապացույցներն են: Այս իրողությունը Հայաստանի ռազմավարական դաշնակցին կանգնեցրել է բազմաբևեռ աշխարհակարգում ուժի կենտրոնի փոխակերպվելու համար անհրաժեշտ՝ նախկին ԽՍՀՄ-ի համասեռ (հոմոգեն) բեկորները համալսմբելու հրամայականի առջև: Ի տարբերություն Եվրասիականության տեսության ու պրակտիկայի միջև արձանագրվող հակասության՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի, Դրիմի կամ՝ Մերձդնեստրի համասեռ բնակչության համար Ռուսաստանն այսօր **փարոսի** դեր է խաղում: Ուստի որքան մեծանում են նրա ղեկավարության հավակնությունները, այնքան ակնհայտ է դառնում Եվրասիական նախագծի անորոշ հեռանկարները մի կողմ դնելու և ռուս ազգի ու երբեմնի արևելաքրիստոնեական (բյուզանդական) քաղաքակրթության բեկորների համալսմբումով զբաղվելու հրամայական անհրաժեշտությունը: Այսինքն՝ երազելով սլավոնաթյուրքական կամ՝ Եվրասիական կայսրության մասին՝ Ռուսաստանը գործնականում աստիճանաբար որդեգրում է **Բյուզանդական ժառանգությանը** վերատիրանալու քաղաքականությունը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2 (ժԲ) փարի, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

Վեյն համահայկական հանդես

Ուրեմն՝ նրա ներկա հակադրությունն Արևմուտքին ռազմավարական առումով **անհեռանկարային** է երկուսի համար էլ, բայց մարտավարական առումով անհրաժեշտ է՝ մշակութային տեսանկյունից իրեն հոգեհարազատ տարածքը կլանելու համար:

**Ուստի մեծագույն միամտություն է ինչպես Ռուսաստանի մարտավարական հաջողություններից ոգևորվելը, այնպես էլ Արևմուտք-Ռուսաստան ռազմավարական առումով անհեռանկարային դիմակայության սուր դրսևորումներից խուճապի մատնվելը:** Դրանք երկուսն էլ իրենց սահմանն ունեն, որովհետև մշակութային առումով համասեռ բեկորների համախմբումով իրեն խորապես հոգեհարազատ միջավայրն ընդլայնող Ռուսաստանը գնալով ավելի ու ավելի է հեռանում Եվրասիականությունից դեպի «**Երրորդ Հռոմի**» իր ավանդական տեսլականը, իսկ նրան այդ ասպարեզում խանգարելու՝ Արևմուտքի անկարողությունն էլ ի հայտ է բերում Ռուսաստանը ներսից «պայթեցնելու» հետսառըպատե՛րազմյան ծրագրերի անիրականանալիությունը՝ ժամանակի կարճ տևողության ծիրում:

Բայց քանի որ այսօր աշխարհում գոյություն ունի ընդամենը մեկ գլոբալ քաղաքակրթություն, ապա առաջիկայում այն իր մարտահրավերներն է առաջադրելու և՛ Ռուսաստանին և՛ սահմանային հանգույցների կամ խաչմերուկների վրա հայտնված երկրներից յուրաքանչյուրին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանն ու Լեռնային Ղարաբաղին: Ժամանակի կարճ տևողության ծիրում առաջինն ի վիճակի է դիմանալ իր դեմ խաղարկվող «երկվորյակների դիմակայության» սցենարին: Տեսանելի ապագայում Արևմուտքն ու Ռուսաստանը չեն կարողանալու հաղթել մեկը մյուսին, բայց ահա մեզ նման սահմանային հանգույցների կամ խաչմերուկների վրա հայտնված երկրներին հարկ եղած դեպքում **ձգմելու են**, եթե վերջիններս միամտաբար կամ հարկադրաբար ուժի տարածաշրջանային կենտրոնների ձևավորման ներկա իրողությունը դիտարկեն որպես իրենց վերջնական՝ քաղաքակրթական ընտրության հնարավորություն:

Ուրեմն ներկա խորքային գործընթացների համատեքստում սեփական քայլերը ծրագրավորելու համար այսօրվանից հարկ է ձշտել երկու հարց.

**առաջին՝** աշխարհում մեր զբաղեցրած որոշակի **տեղի** պատճառով այսուհետ ևս սովորական «տաշեղի» նման մեր շուրջը փոթորկող «ալիքի» մեջ ենք տարուբերվելու, թե՛ որպես ազգ ու պետություն նրանում սեփական գիտակից ներկայությամբ պատմություն կերտողի **դերին** ենք հավակնելու,

**երկրորդ՝** ո՞րն է մեր շուրջն ընթացող փոփոխությունների դինամիկան և ուղղվածությունը գնահատելու սեփական չափույթը՝ գծային պատմության ռաջիոնալ ընկալումից բխող կեցության՝ որպես ժամանակի իմաստավորման մեր ազգային կերպը<sup>7</sup>:

Առանց աշխարհում Հայաստան պետության ներկա սահմանափակ **սուրյեկտայնության** չափի և նրանում հայ ազգի ներկայության **ժամա-**

7 Այս հարցի ընկալման գիտական չափորոշիչները տեն «ՎԷՄ»-ի ներկա համարում հրապարակվող **Մարիետա Կ. Նիկողոսյանի** «Կեցության հիմնախնդիրը Հանս-Գեորգ Գադամերի ուսմունքում» ուսումնասիրության մեջ:

**նակային** չափորոշիչների հստակեցման՝ տեղի ունեցող գործընթացների մասին մեր բոլոր պատկերացումները կմնան որպես կյանքից ու ժամանակից կտրված տեսական մտավարժանքներ, եթե մեր ներսում արթնացող «պատմության հանդեպ վախը» չփոխակերպվի համաշխարհային պատմության գծային ընթացքի ներկա տարածում-դիֆուզիան **խառը** կամ **հիբրիդային** ժամանակի միջոցով գնահատելու գործընթացի:

Նման չափույթը թույլ կտա գլոբալ զարգացումների ընթացքը դիտարկել գծային, իսկ տարածաշրջանայինը՝ ցիկլային ժամանակի միջոցով: Առ այդ՝ թեև մենք չենք կարող ներագդել գլոբալ մակարդակի վրա ծավալվող զարգացումների ուղղվածության վրա, բայց պարտավոր ենք դրանց տարածաշրջանային անդրադարձերի ցանկացած տարբերակի դեպքում ունենալ միջավայրի փոփոխություններին հարմարվելու նվազագույն հնարավորություններ: Ու քանի դեռ մեր շուրջն ընթացող և առաջիկայում սպասվող տեղաշարժերի **անխուսափելիությունը** հստակորեն չի ցուցանել միմյանց վրա ազդող ու հակազդող ահռելի ուժերի բախման **վերջնարդյունքի** թեկուզ ընդհանուր ուրվագիծը՝ տարածաշրջանի ապագան կանխորոշող զարգացման որևէ բնորդի պատմական ինվարիանտությունը, ծավալվող իրադարձություններում մեր սահմանափակ սուբյեկտայնության գիտակցումը հավասարազոր է լինելու դրանց ընկալման **տարբերակվածությանը**, այսինքն՝ **վարիանտայնությանը**:

Որովհետև գծային պատմության անկասելի ընթացքի տարածաշրջանային շրջապտույտի մեջ փլուզված կայսրությունների ժառանգությանը տիրանալու համար բռնկվող մեծ դիմակայությունները ժամանակի միջին տևողության, այսինքն՝ տնտեսական ցիկլերի համատեքստում, իրենց մեջ լուրջ վտանգներ են պարունակում և հղի են անկանխատեսելի և անզամ իռացիոնալ զարգացումների հեռանկարով: Դրանց դառը պտուղները մենք արդեն քաղել ենք այս տարի իր հարյուրամյակը թևակոխող՝ Առաջին աշխարհամարտի<sup>8</sup> վերջնամասում, երբ Լուսավորության դարաշրջանի հումանիստական նախագծի փլուզումը և մարդու վերածվելը գազանի **Հին Բյուզանդիան** կործանած սելջուկյան 1071-ը փոխակերպեց **Նոր Բյուզանդիայի** փլուզման բոլշևիկյան 1917-ի:

Ավելին՝ չպետք է մոռանալ, որ նախկինում գոյություն չունեղ ներկա գլոբալ տնտեսությունը, որում խաղի կանոնները փոխելու համար պետք է հաշվարկել **ու գործել** առնվազն ժամանակի միջին տևողության չափորոշիչների հիման վրա: Ու քանի որ մեր անվտանգության ապահովման խնդրի լուծումը կախվածության մեջ է հայտնվել սակրալ հիշողության հիման վրա կայսերական ավանդույթը 21-րդ դարում կերպավորելու իռացիոնալ փորձերի հաջողությունից, Հայաստանի սահմանափակ սուբյեկտայնության նվազագույն շեմի պահպանումը **բացարձակ անհրաժեշտություն է**:

Պատճառն ակնհայտ է. Եվրասիականության գաղափարախոսական շղարշի տակ Ռուսաստանի կողմից այսօր հետապնդվող «բյուզանդական նախագիծը» ռազմաքաղաքական գետնի վրա՝ ժամանակի կարծ

<sup>8</sup> Ավելի մանրամասն տե՛ս «Վէմ»-ի ներկա համարում հրապարակվող **Տիգրան Ս. Սիմյանի** «Ինտելեկտուալի հաքիտուսը պատերազմի համատեքստում» հոդվածը:

տևողության շրջագծում, գրեթե անխոցելի է: Սակայն ժամանակի միջին, առավել ևս երկար կամ քաղաքակրթական տևողության ծիրում նրա պատմական ինվարիանտությունն ուղղակի հնարավոր չէ երաշխավորել Ռուսաստանի համակեցական հստակ **տեսականի՝** կայսրությունը ներքնապես համախմբող **կենսարար գաղափարի** բացակայության պատճառով:

Մեր կարծիքով, Եվրասիականությունը համակեցական հստակ բնորդի փոխարկվելու պարագայում հանգեցնելու է Ռուսաստանի բուն միջուկի անհաշտ դիմակայությանը այդ երկրում զգալիորեն ամրապնդված թյուրք-խլամական գործոնի հետ: Այդ իրողությունը, գումարվելով տնտեսության արդիականացման հրամայականին, հարկադրելու է Ռուսաստանին մի կողմից՝ վերադառնալ իր ավանդական ուղղափառ-սլավոնաֆիլական արժեհամակարգին, իսկ մյուս կողմից՝ որպես բազմաբևեռ աշխարհակարգի ազդեցիկ դերակատար, դիմաշրջվել դեպի Բալկաններ և Առաջավոր Ասիա: Արդյունքում՝ Ռուսաստանը դառնալու է ոչ թե Արևմուտքի հակադրությունը, այլ նրա երկմիասնական-բյուզանդական **շարունակությունն** Արևելքում: Ուստի Հայաստանը, պահպանելով իր ներկա սահմանափակ սուբյեկտայնությունը, այսօրվանից պետք է նախապատրաստվի նման բարենպաստ հեռանկարին:

*Խմբ.:*

## ANATOMY OF NEW CHALLENGES

*Editorial*

## АНАТОМИЯ НОВЫХ ВЫЗОВОВ

*Редакторская статья*